

«Ակնարկ արդի հայերենի ուղղախոսության» լրամշակված
ուսումնասովանդակ ձեռնարկի մասին

2018թ. լույս տեսած սույն մենագրությունը կարևոր ներդրում է, ուշագրավ նրանով, որ վերաբերում է արդի հայերենի հատկապես ուղղախոսությանը: Ինչպես հայտնի է, ուղղագրության վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, մինչդեռ ուղղախոսությանը նվիրվում են սակավաթիվ աշխատություններ, և այժմ ահա հոգուտ այդ ուղղության՝ հրատարակված է ամբողջական մի աշխատանք Երևանի Վ. Յա. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ: Աշխատության հեղինակներն են Ս. Տիոյանը և Ֆ. Խլդաթյանը, խմբագիրը՝ Դ. Գյուրջինյանը:

Ձեռնարկի հեղինակները, ունենալով բուհերում դասավանդելու երկարամյա հարուստ փորձ և նկատի առնելով գրական հայերենի զարգացման բնականոն առաջընթացը, փորձում են դասակարգել ուղղախոսական օրինական տարբերակները և առաջարկում անպայմանորեն կիրառել հայերենի արտասանական կանոնական և ընդունելի ձևերը: Աշխատության բովանդակությունը ներառում է տասներեք գլուխ. 1. Ընդհանուր դրույթներ, 2. Ժամանակակից գրական հայերենի արտասանական առանձնահատկությունները, 3. Ձայնավորների արտասանությունը, 4. ԵՎ-ի արտասանությունը, 5. Կրկնակ ձայնավորների արտասանությունը, 6. Հարակից ձայնավորների արտասանությունը, 7. Կրկնակ բաղաձայնների արտասանությունը, 8. Հ-ի արտասանությունը, 9. Բ-ի և Ռ-ի արտասանությունը, 10. Արտասանական ոճեր, 11. Արտասանություն և շեշտ, 12. Հավելվածներ, 13. Մատնանշված և օգտագործված գրականություն:

Աշխատանքում նշվում է, որ լեզվաբանության մեջ ժամանակակից գրական հայերենի ուղղախոսության խնդիրներին անդրադարձել են բավականաչափ ուշ՝ 1974թ., և գտել, որ գրական արտասանության շրջանակներում զուգահեռ ձևերի գործածությունը անխուսափելի է և օրինաչափ, մինչդեռ այս աշխատության հեղինակները գտնում են, որ պետական գործառույթներով օժտված արևելահայ գրական լեզուն պետք է զերծ լինի անընդունելի զուգաձևություններից՝ բարբառային, հասարակաբան, օտարաբան հնչական ձևերից, որովհետև հենց ուղղախոսությունն է նպաստում թե՛ բանավոր լեզվի ճիշտ, արագ ընկալելուն, թե՛ գրական լեզուն արդյունավետ ուսուցանելուն, թե՛ լեզվական անճշտությունները բացառելուն, բանավոր խոսքի որակը բարձրացնելուն: Ժամանակակից գրական արևելահայերենի արտասանական առանձնահատկություններին անդրադառնալիս հեղինակները գտնում են, որ կարևոր է բացահայտել.

1. Հնչյունական-արտասանական տեղաշարժերը,

1) անընդունելի »Յ ³Ý·É»ñ»ÝÇ ³ñĩ³ë³ÝáðÃÛ³ÝÁ ÝÛ³Ý³íáÕ ¹»åñ»ñ, ùñÇÝ³íª դոկտոր → դոկտ/ը/ր, Լոս Անջելես → Լոս Անջելոս-Լոս Անջել/ը/ս, Նյու Յորք → Նյու Յ/ը/րք, Հոլիվուդ → Հալիվուդ, քոմպյուտեր → քոմփյութ/ը/ր (համակարգիչ), ·) Մերժելի՝ բար-բառային արտասանության ներմուծումը լրական խոսք:

3. Բառասկզբի /յե/ հնչումը բառամիջում դառնում է /ե/Ք Այդպես՝ /յե/րկիր → ստոր/ե/րկրյա, արտ/ե/րկրյա, վեր/ե/րկրյա, բայց ո՞չ՝ ստոր/յե/րկրյա, արտ/յե/րկրյա, վեր/յե/րկրյա, /յե/րջանիկ → ապ/ե/րջանիկ, բայց ոչ՝ ապ/յե/րջանիկ Է Սակայն երբ բաղադրյալ բառի ե-ով սկսվող վերջնաբաղադրիչին նախորդում է ձայնավորով վերջացող բաղադրիչ, հնչում է /յե/. կիսա/յե/փ, ինքնա/յե/ռ, ամենա/յե/րկար, ամենա/յե/րջանիկ: Այսպիսով՝ հնչյունական փոփոխության հիմքում թաքնված է հնչյունաբանական գործոնը: Ը ձայնավորի արտաբերման մասին մանրամասն դիտարկումներից հետո մատնանշվում է և հակառակ երևույթը՝ ուղղախոսական չկանոնակարգված վիճակի ազդեցությունը ուղղագրության վրա, ինչպես **ոչ մեկը** ժխտական դերանվան կիրառությունը առանց **ը-ի՝ ոչ մեկ**, օրինակ՝ **Ոչ մեկ չի կար-դացել այդ օրենքը, Ոչ մեկ չէր մտածում, թե կպարտվի, Ոչ մեկ չեկավ** և այլն: Իսկ ·ñ³µ³ñÛ³Ý ½ Ý³Ë¹ÇñÁ Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, որը, ցավոք, լայնորեն տարածված է և՛ երիտասարդության, և՛ լրատվության շրջանակ-ներում և Սիրեցե՞ք զմիմեանս՝ նախադասություններում գրեթե ոչ մեկը ճիշտ չի արտաբերում. այն պետք է բաղաձայնից առաջ արտաբերել [ըզ] և ոչ թե [զը]. փոխանակ արտաբերեն Ճանաչել զիմաստություն և ըզխրատ, իմանալ ըզբանս հանճարո՝ և Սիրեցե՞ք ըզմիմեանս, արտաբերում են՝ Ճանաչել զըիմաստություն և զըխրատ, իմանալ զըբանս հանճարո՝ և Սիրեցե՞ք զըմիմեանս: Հեղինակներն ընդգծում են, որ վերջին ժամանակներս օտար բառերի տառադարձության դեպքում **ը-ն** ավելի է ընդարձակել իր գործառության սահմանները՝ Հարվըրդ, Նասըր, Ջերըրդ Ֆեթ և այլն: Ը-ն՝ որպես հոդ, անտեսվում է հատկապես երիտասարդների խոսքում. ամեն օր լսում ենք և՛ բանավոր խոսքում, և՛ տարբեր երեքներից: **Ոչ մեկը** ժխտական դերանվամբ կազմված ձևերը արևմտահայերենում կանոնական են և ունեն որոշակի բաշխվածություն: **Ոչ մեկ** անհոդ կիրառությունը պարտադիր կերպով պահանջում է գոյական՝ **ոչ մեկ մարդ, ոչ մեկ երեխա** և այլն, իսկ հոդավոր ձևի դեպքում գոյականը բացառվում է՝ **ոչ մեկը ըսաւ, ոչ մեկը եկաւ** և այլն,

մինչդեռ արևելահայերենում անհոդ կիրառությունը կանոնական չէ և համարվում է զավառաբանություն:

Հեղինակներն իրավացիորեն գտնում են, որ ե՛Ֆե հայոց գրական լեզվի արդի փուլում որոշակի է ուղղագրության ազդեցությունը ուղղախոսության վրա, ապա ը-ի պարագայում կարելի է վստահաբար ասել, որ առկա է հակառակ երևույթը^a ուղղախոսական չկանոնարկված վիճակի ազդեցությունը ուղղագրության վրա: ԵՎ-ի արտասանությունը գլխում հանգամանորեն խոսում են դրա կիրառման մասին Է Բառասկզբում այն կիրառվում է «**Է, և ևս, Եվրոպա՝** և սրանցով կազմված **եվրոպական, եվրոպացի, »Ճ, եվրոպահայ, եվրոպահայություն** բառերում, áñáÝù ³ñĩ-ë³ÝíáðÕ »Ýª [ÚçÍÁĖ], [ÚçÍյեվս], [ÚçÍրօպա], [ÚçÍչՃ]) Է Բառամիջում և բառավերջում հանդիպող և գիրը արտասանվում է երկու կերպ^a որպես [եվ] և [յեվ] Է

[եվ] արտասանվում է բաղաձայններից հետո, քրինակ՝

բարևել-բար[եվ]ել, կարևոր-կար[եվ]որ, հարևան- հար[եվ]ան տերև-տեր[եվ], արև-ար[եվ],

[յեվ] արտասանվում է ձայնավորներից հետո. նաև-նա[յեվ], թեև-թե[յեվ] բառերում, ինչպես և մի շարք օտար ազգանուններում. Սերգե[յեվ], Մատվե[յեվ], Նիկոլա[յեվ] և այլն, նաև բաղաձայնից հետո՝ Կոն[յեվ], Տուպո[յեվ], Ջվեր[յեվ], Մեդվեդ[յեվ] և այլն Է

ԵՎ պարունակող մի շարք բառեր ունեն արտասանական զուգաձևություններ^a կարող են արտասանվել թե՞ [եվ]-ով, թե՞ [յեվ]-ով.

թերևս→ թեր[եվ]ս - թեր[յեվ], դեռևս →դեռ[եվ]ս - դեռ[յեվ]ս, այլևայլ→այլ[եվ]այլ - այլ[յեվ]այլ,այլևս→այլ[եվ]ս - այլ[յեվ], ինչևե→ինչ[եվ]ե - ինչ[յեվ]ե, որևե→որ[եվ]ե - որ[յեվ]ե, ինչևիցե→ինչ[եվ]իցե - ինչ[յեվ]իցե, որևիցե→որ[եվ]իցե - որ[յեվ]իցե, իբրև→իբր[եվ] - իբր[յեվ], թեպետև→թեպետ[եվ] -թեպետ[յեվ], թեկուզև→թեկուզ[եվ] - թեպետ [յեվ] և այլն:

Նշված զուգաձևերից նախընտրելի է [եվ]-ով արտասանությունը, քանի որ բոլոր բառերում և-ը հաջորդում է բաղաձայնի Է Իրավացիորեն ասում են., որ անընդհատ զարգացող լեզուն համարվում է նորանոր, հատկապես փոխառյալ տերմիններով, որոնց արտասանությունը միատեսակ չէ, երբեմն փոխառու լեզուների հնչողությունը

տարբեր է լինում, և տեղի է ունենում բառի արտասանության շեղում, որն էլ լուրջ խնդիր է առաջացնում արտասանությունը կանոնակարգելու գործընթացում /էջ 60/:

Բ-ն հարաբերակցության մեջ (հատկապես երիտասարդ սերնդի լեզվում) հանդիպում է արտասանության աղավաղման մի դեպք, երբ Ռուսախոս հայերն ու սրանցից՝ վարակված՝ հայախոս հայերը բանավոր խոսքում ր-ի փոխարեն արտասանում են ո. Արմեն^ա Առմեն, Գերմանիա^ա Գեռմանիա, վերջ^ա վեռչ, խարույկ^ա խառույկ և այլն: Դա միանգամայն մերժելի էՔ Առավել ևս, որ հայերենը այն բացառիկ լեզուն է, որը գրավոր լեզվում դրանք զանազանելու հնարավորություն է ընձեռում: Աշխատության կարևոր նկատառումն է լեզուն զերծ պահել անընդունելի սխալներից: Հասարակության մեծ մասը ակնդիրը և ունկնդիրն է ռադիոհեռուստատեսության հաղորդումների, բեմական խոսքի, և իրավացիորեն ընդգծվում է, որ մեր բեմական խոսքը գրական լեզվի աստիճանից իջել է ժողովրդախոսակցականի, առատ է հասարակաբանություններով: Այդ բնագավառների ներկայացուցիչներն իրենց տրամադրության տակ չունեն գրական հայերենի ուղղախոսության հանձնարարելի կանոնների այնպիսի ուղեցույց-ձեռնարկ, որ չխաթարվի մեր ոսկեդենիկ լեզուն սխալ արտասանություններով: Շատ անհրաժեշտ է ունենալ ուղղախոսական բառարան, ինչպես Ռ. Ավանեսովի ռուսաց լեզվի համար կազմած բառարանը: Գրական լեզվի կենդանի հնչումը առնչվում է գրային, բարբառային և փոխառյալ տարբերակներին: Առկա է ներգաղթած հայերի՝ բաղաձայնների արտասանության օրինաչափությունը: Հեղինակները անդրադառնում են նաև բայի խնդրառությանը առնչվող ուղղախոսական սխալներին:

Դրանք հանդիպում են բանավոր ու գրավոր խոսքում և բազմաբնույթ ու բազմա՝զան են, վերաբերում են լեզվի կառուցվածքի տարբեր դրսևորումներին: Մասնավորապես շատ են բայի խնդրառության հետ կապված ամենատարբեր սխալները: Այսպես, Դու կարաս ընկերակցես ինձ, Սրանից հետո տնից մենակով դուրս չեմ գա, Հարևանուհիս սիրուն է արտաքինից, Վառ գույների մեջ են հագնվում, Ես դաստիարակվել եմ Ռ. Հախվերդյանի երգերի վրա, Եվան իր ափսեի մեջ էր և այլն: Հատկապես նոր ու անչափ հաճախա՝եպ օրի՝նակ է իրերի, անշունչ առարկաների փո՝խա՝րեն անձնական դերանունների (դրանցից հատկապես ինքը

դերանվան ուղիղ և թեքված ձևերի) կիրառությունը. օրինակ՝ Ճակնդեղը սիրում է խոնա՝վություն, ինքը չոր վայրերում չի աճում. կամ՝ Լիճն իրենից անչափ կարևոր հետաքրքրություն է ներկայացնում: Իրադարձություններ, որ տեղի են ունեցել հիմա, իրենք կշարունակվեն հետո էլ ...Բնական մայրնեզը ինքը կարող է սառնարանում մնալ մի քանի օր ... Սրանք սխալներ են, որ ամեն օր հնչում են եթերով, հայտնվում են մամուլի էջերում. Ինչ վերաբերում է ծրագրերի փոփոխության հետ կախված, ես կարծում եմՄեր հաղորդման ընթացքում հանրության հասարակությանը հուզող հարցեր ենք բարձրացնում ...Ինչքան ժամանակով եք նկարել էսքիզը , Վաղը հիվանդը կվերադառնա իրեն աշխատանքին...Նրանք կիսել են մեր կարծիքը (վիշտը) ուրախությունը (փոխանակ՝ նույն կարծիքին են, համակարծիք են, վշտակից են, միասին ուրախացել ենք),Այդ հարցի լուծումը կա, և լուծումն իրեն օգտին չի,Մենք խոսելու ենք ըստ էությանը և այլն:

Անհարկի օտարաբանություններով լեցուն խոսքի՝ նմուշներ՝Պոլիկլինիկայում մոտեցեք ռեսեֆշընին (նկատի ունեն վիճակագրական բաժինը),Այդ միջոցը էֆեկտիվ չէ (շահավետ, արդյունավետ չէ),Կոնյակը հայկական բրենդն է, Հիմա վեց հոգով կարող ես բլոգ ստեղծել, ու նման մի բան էլ Գրողների միությունն է, Գաղտնիք չէ, որ մեր երկրի գոյատևման հիմնական պայմաններից մեկն էլ մասնավոր տրանսֆերտների ահռելի ծավալն է, Կառավարությունում այսօր հավանության է արժանացել մի նախագիծ, որով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի դիսպոզիցիայի նոր խմբագրություն, ինչի արդյունքում հստակեցվում են հանցագործության եղանակները:

Ինչպես երևում է բերված օրինակներից, խոսքային սխալները տարաբնույթ են ու բազմաշերտ, որոնք ըստ բանախոսների՝ առանձին ուսումնասիրության առարկա են: Լեզվաբանները փորձում են դասդասել ըստ քերականական ոլորտների՝ հնչարտասանական, բառագործածական, ուղղագրական-ուղղախոսական, շարահյուսական՝ հոլովառության, խնդրառության, համաձայնության և այլն:

Աշխատանքի ավարտամասում՝ 74-95 էջերում, տրված են զգալի քանակով բառերի շարքեր՝ մատնանշելով ճիշտ և սխալ ձևերը:

Պետք է նշել, որ մեր օրերում այս աշխատանքը շատ կարևոր, պահանջված ներդրում է՝ հայերեն բանավոր խոսքը մաքուր պահելու առումով: Ցանկալի է ունենալ նաև առանձին ուղղախոսական բառարան: